

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Theories of Ethics

Բարոյագիտութեան մասին, հին գրքի մը սկիզբը տեղադրուած է հետեւեալ գաղափարը՝ «Մարդը վարուելու հարկադրուած է»: Այլ խօսքով, մարդը անհրաժեշտօրէն եւ յարատեւ ձեւով պէտք է որոշումներ կայացնէ եւ ըստայնմ վարուի, սկսելով կենցաղային պարզ վարմունքի օրինակներէն, մինչեւ բարոյական բարդ վարմունքի օրինակները:

Ստորեւ, իւրաքանչիւրէն մեկական օրինակ.-

- Եթէ ուսանողի մը անկողնի կողքին առաւօտեան զարթուցիչը հնչէ, ուսանողը պէտք է որոշէ՝ կամ վեր կենալ, պատրաստուիլ ու համալսարան երթալ եւ կամ անկողնին մէջ մնալ ու վերստին քունի մտնել:
- Եթէ ամուսնացած ամուլ մը, փոխադարձ յարաբերութեանց երկարատեւ ու ծանր դժուարութիւններու մէջ է, պէտք է որոշէ՝ ամուսնալուծուիլ, թէ ոչ:

Մանրամասնելով երկրորդ, բարոյական բարդ վարմունքի օրինակը, պիտի տեսնենք, որ կարելի է զանազան ելակէտներ ունենալ եւ հիմնաւորումներ կազմել, ի վերջոյ որոշելու՝ անհատին համար ճիշդ վարմունքը:

- Եթէ մտածեմ, որ ամուսնալուծուելէ ետք, նոր կողակիցս ինծի համար աւելի հաճոյալի պիտի դառնայ, այն ատեն վարմունքիս ելակէտը՝ *հաճոյապաշտութիւն* (Hedonism) է: Ասով սակայն կարելի չէ բարոյական ուղի մը հիմնաւորել:
- Եթէ մտածեմ, որ ինծի համար ի՛մ երջանկութիւնը ամենակարեւորն է ու ամուսնալուծուիմ, այն ատեն վարմունքիս ելակէտը կրնայ *երջանկապաշտութիւնը* (Eudaimonía) կամ *եսասիրութիւնը* (Egoism) ըլլալ: Իր գերա-